

թեան, որովհետեւ Վարչական Ժողովը՝ թէպէտ քիչ դէպքերու մէջ՝ Տեսչին կը թողուիր գործակիցներէն մին ընտրել այդ պաշտօնին. նոյնը եղած է երբեմն նաեւ Տնտեսան և առտնին ինչ ինչ պաշտօններու համար: Սոյն իրաւասութիւնը շնորհուած է ժամանակին Հ. Սարգիս Թէոդորեանի, Հ. Ղեւոնդ Ալիշանի և այլ քիչերու:

3⁰. Յիշել որ ըստ սովորութեան Ուսումնապետն է Փոխ-Տեսուչ և Հսկողապետ Վարժարանին՝ երբ պաշտօնապէս չիկան կամ չեն նշանակուած անոնց առանձինն:

ԿԱՏԱՎԱՐԱՐ

Այս խորագրով պիտի ներկայացնենք՝

1⁰. Վարժարանին Գործակալը, որ կը զբաղի ծախսի, տուրքերու, շինութեանց կամ նորոգութեանց գործերով:

2⁰. Նկատելով Մատակարարին հետ սերտ աղերս ունեցող ստորակարգ մասնական պաշտօններ, ինչպէս Տնտես, Հանդերձապետ և Հիւանդապահ, ամէն անգամ որ ասոնցմէ միոյն հանդիպեցանք որոշակի մեր հետազօտութեանց միջոց, դրինք նոյնպէս միեւնոյն Մատակարար տիտղոսին տակ, ի փակագծի զետեղելով մօտը՝ նաեւ վաւերագրին կողմանէ ցոյց տրուած վերադիրը, որպէս զի այսպէս անջատուելով մասնականները՝ ըստ կարելւոյն չպատահին անորոշութիւններ:

ՈՒՍՈՒՑԻՉ

1⁰. Դիւանական հոմանիշներ են՝ «Վարժապետ», «Վարժապետ ուսմանց», «Ուսուցիչ», «Ուսուցչապետ»:

2⁰. Այս կարգին մէջ դասեցինք նաեւ «Դաստիարակ մանկանց կամ մտնկտոյն», «Պահապան մանկանց», «Վերակրօն ուշակերտելոց», «Հովիւ», «Հսկող» և այլ մակղիւրներ, գուշակելով իրենցմէ միանգամայն դասաւանդութիւն մը այս կամ այն ուսման, ինչպէս ցարդ կը կատարուի:

3⁰. Ուսուցիչ, Ուսուցչապետ, Դաստիարակ գործածուած են մերթ Ուսումնապետի տեղ:

ԱՇԽԱՏԱԻՈՐ ԵՂՔԱՅՐ

Միութեան Դաստիարակներու խումբերուն կից նշանակած ենք նաեւ Միաբանութեան այն Աշխատաւոր Եղբայրները՝ որոնք մեր կրթական Հաստատութեանց մէջ թանկագին ծառայութիւններ մատուցած են՝ ըստ վկայութեան ժամանակի պաշտօնական թղթակցութեանց. ուստի արժանի են անոնք՝ դաստիարակի հաւասարապատիւ գնահատանքով յիշուելու այս Հարիւրամեայ Յորելեանին առթիւ:

Սակայն անոնց անուններն ու թուականները՝ փոխանակ ըստ պաշտօններու ցանկին տեղաւորելու՝ ամէնը միասին յատուկ խումբ մը կազմեցինք Ուսուցիչ վերջ ԱՇԽԱՏԱԻՈՐ ԵՂՔԱՅՐ խորագրով:

Կանխենք ըսելու, որ դժբախտաբար անոնց յաջորդական կարգերը և որոշ թուականները պիտի չյաջողինք ամէն անգամ տալ, (ինչպէս նախընթացներուն մէջն ալ մերթ կը հանդիպին). այնու հանդերձ պիտի գոհանանք՝ գէթ գտածնիս արձանագրելով:

Նշանակուած կարգերուն մէջ զանց ըրած ենք յիշատակել եւս՝ մեր կրթական սեմերէն ներս իրենց ունեցած առտնին պաշտօնները՝ որոնց լոկի նուիրուած էին. բայց և այնպէս՝ մենք հոս իբր արձան յիշատակի պիտի դնենք, որ անոնք՝ բաց ի տնական աշխատութիւններէ՝ եղած են մերթ ընդ մերթ օգնական կամ փոխաւորդ Մատակարարի կամ Տնտեսի, նաեւ Հանդերձապետ, Մաշակապետ, Հսկող, Գիշերապահ